



ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԿՕՐՑԱ ԴՊՐՈՑԸ

• Մեկօրյա դպրոցով հայոց լեզու և հայագիտություն չեն զարգացնում
• Հայապահպանության հույս
• Այս դպրոցը հայի տուն է, օջախ, հոգիների մերձեցման և ընդհանուր կյանքով ապրելու խարիսխ:
• Եզերք, որից սկսվում, տարածվում, ձգվում են շատ կարևոր որոնումների ուղիներ, ճանապարհներ:
• Արմատները ամրացնելու փորձ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Այս դպրոցը կամաց-կամաց դառնում է հայի տուն, օջախ, հոգիների մերձեցման և ընդհանուր կյանքով ապրելու խարիսխ: Եզերք, որից սկսվում, տարածվում, ձգվում են շատ կարևոր հարցերի պատասխաններ որոնելու ճանապարհներ:

ՄԵԿՕՐՑԱ ԴՊՐՈՑԻ ԿԱՅՑԱՑՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՀԵՆՔԵՐԸ

• Հովանավոր, հենարան, բարերար /եկեղեցի, համայնք/
• Ուսուցիչներ
• Շահագրգռված ծնողներ
• Սովորողներ
• Շենք և հարմարություններ
• Ուսումնական կյուրթեր
• Գովազդային միջոցներ
• Դպրոցի կանոնակարգ, ուսումնական պլան, ուսումնական վկայական, ձկուն դասագրուցակ, խորհրդանիշների առկայություն, խրախուսման ձևերի և միջոցներ

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

• Հստակ ազգային գաղափարախոսություն — եթե ուզում ես պահել լքո հայրենիքի պետական ամբողջականությունն ու ինքնուրույնությունը, հայի տեսակը,
• 2-րդ կարևոր առաջադրանքը հազարամյակների ձևավորված ազգային բնավորության շտկումն է, որը պետք է տևի գոնե հարյուրամյակներ և գործընթացը սկսվի հենց այսօր, հենց մեր կողմից, հենց մեր աշակերտների հետ:
• Իրականացնել հայեցի կրթություն և դաստիարակություն. հայկական ոգու, ազգային անխառն նույնականության և միասնության պահպանում:
• Ձևավորել երկու մշակույթների կրող մրցունակ քաղաքացի:
• Կարողանան դառնալ տվյալ երկրի հասարակական կյանքի մաս:

• Բարեկամության (կամ գոնե հարաբերությունների) պատմական փաստերով հարստացնել սովորողների աշխարհայացքը:

• Ձևավորել, կողմնորոշել առողջ հայրենասեր ոգի, որը չի հակադրվում համամարդկային հանդուրժողականության:

• Նպաստել սեփականի և այլապատկանի հարատև բախման առօրյայում հայկականի հաղթանակին:

• Դաստիարակել Հայրենիքի զինվոր սարքեր ասպարեզներում:

• Ձևավորել Հայրենիքի դեսպաններ:

• Հին աշխարհի և միջին դարերի ուսերեն դասագրքերում մի բառ անգամ չկա Հայաստանի կյան գոնե հայ ժողովրդի մասին, մենք չենք ունեցել Տիգրան Մեծ, Մաշտոց կամ Նարեկացի, թե քրիստոնեությունը առաջինը չենք ընդունել որպես պետական կրոն:

• Նպաստել հայրենադարձությանը:

ԿԱՊԸ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՑ

• Համահայկական միջոցառումների մասնակցություն
• Լավագույն խրախուսման ձևը պետք է լինի Հայաստան մեկնելու հնարավորությունը

Մենք պետք է ստեղծենք հոգևոր հայրենիքի այն տեսլական կերպարը, որը կարող է ապագայում ձեռք բերել կյուրթական արժեք և գործություն: Միգուցե և մոտեցնել մեր պատմական պարտքի և հիշողության հատուցման եզրագծերի ուրունման բերքառատ ժամը:

թական արժեք և գործություն: Միգուցե և մոտեցնել մեր պատմական պարտքի և հիշողության հատուցման եզրագծերի ուրունման բերքառատ ժամը:

3. Հայրենիքում տեղի ունեցած պատմական վերջին իրադարձությունների առնչությամբ մշակել կրթադաստիարակական երաշխավորելի ուղղություններ, ճիշտ շեշտադրումներ պատանիների և երիտասարդների մեջ հայրենասիրական դրական գզացմունքներ առաջացնելու նպատակով:

4. Կրթական և դաստիարակական բոլոր աշխատանքներով նպաստել հայ և ռուս ժողովուրդների բարեկամությանն ու փոխըմբռնմանը: Բ սկզբանե սաներին ներշնչել երկու հայրենիք ունենալու և երկու մշակույթների կրող լինելու հմայիչ և շահավետ գաղափարը, հայ-ռուսական բարեկամության պատմական փաստերով հարստացնել նրանց աշխարհայացքը:

5. Հաշվի առնելով, որ ժամանակակից երիտասարդը գերզբաղված է, իսկ հայրենիքը չունի այն գործնական նշանակությունը, ինչ ռուսերենը, անգլերենը կամ այլ եվրոպական լեզու ամուր ու կենդանի պահել մայրենի լեզվի մշակույթի և ավանդույթների նկատմամբ ակնածանքի հոգեվոր հիմքը, ստեղծել մրցունակ շահագրգռություններ:

6. Մասնակցություն ունենալ բոլոր համահայկական միջոցառումներին, սերտացնել և կանոնավորել կապերը Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի նախարարությունների հետ:

7. Համագործակցել ՌԴ հանրակրթական և լրացուցիչ կրթության օղակների հետ, կազմակերպել համատեղ միջոցառումներ:



III ВСЕРОССИЙСКОЕ СОВЕЩАНИЕ УЧИТЕЛЕЙ АРМЯНСКОГО ЯЗЫКА И АРМОНОВЕДЕНИЯ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՒՄՍԱԿԱՆ III ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Ինքնավարության հետ հարաբերվող հայոց լեզվի ուսուցիչների և հայեցի կրթության ջատագույների ջանքերով ձևավորել և զարգացնել համախմբվածություն եկեղեցու, հավատի, ընդհանուր հայրենասիրական իդեալների, ազգային գաղափարախոսության շուրջ: Այդ նպատակով ստեղծել «ՌԴ Հայ ուսուցիչների միավորում», որը կունենա միասնական մանկավարժական առցանց հարթակ պարբերական խորհրդակցություններով և տեղեկատվության միջոցներով, աստիճանաբար կձևավորի միասնական ծրագրերով և դասագրքերով համընդհանուր կրթական դաշտ:

2. Նպաստել մեր հազարամյա պատմության և լեզվի մասին գիտելիքների տարածմանը և հանրայնացմանը, անցկացնել բոլոր եկեղեցական և ժողովրդական տներին նվիրված միջոցառումներ, դրանք լուսաբանել սոցցանցերում և մեդիա հարթակներում:

8. Ուսումնական տարվա ընթացքում, ընդգրկելով ավելի և ավելի շատ կրթական օղակներ, կազմակերպել համատեղ միջոցառումներ: 1) Ուսուցիչների համառուսական խորհրդակցություն /աշնանը/, 2) Շարադրությունների և ասունքի մրցույթ /գարնանը/, 3) Աշակերտների հայրենագիտական վիկտորինա /մայիս, տարումեջ/, 4) Հանրագումարային գեղարվեստական միջոցառում տարբեր դպրոցների լավագույն աշակերտների մասնակցությամբ /մայիս, տարումեջ/:

9. Հաջորդ խորհրդակցությունների օրակարգ մտցնել վարպետության դասեր և բննարկումներ:

10. Կրասնոդարի երկրամասի ԱՄԻ Հովի. Թումանյանի անվան Հայկական մշակութային-լուսավորչական կենտրոնում կազմակերպել հայոց լեզվի, հայրենագիտության, հայ ժողովրդի և մշակույթի պատմության ուսուցիչների վերապատրաստման կուրսեր երիտասարդ ուսուցիչների համար, մասնագետներ հրավիրելով նաև Մայր հայրենիքից /առցանց կամ առկա/:

Պատրաստեց Արմինե ՉՈՎՍԵԹՅԱՆԸ

